ՍՈՂՀԱԽՕՍԱԿԱՆ

Ի ՏԷՐ ՀԱՆԳԵԱՒ Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՒ. ՔՀՆՅ. ՄԱՐՈՒՔԵԱՆԸ

Խոր ցաւով հայտնում ենք, որ երկարատեւ հիվանդությունից հետո 2014թ. հունվարի 1-ին ի Տեր հանգաւ Հյուսիսային Ամերիկայի Արեւմտյան թեմի հանգստի կոչված հոգեւորականներից արժ. Տ. Հովհաննես ավագ քահանա Մարուքյանը:

Արժ. Տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը ծնվել է 1926թ. մարտի 7-ին, Գըրըքխան գյուղաքաղաքում (այժմ Թուրքիա):

Նախնական կրթությունը ստացել է տեղի հայկական դպրոցում: 1939թ. ընտանիքն արտագաղթել է Սիրիայի Հալեպ քաղաքը, ուր նա ուսումը շարունակել է Ուսումնասիրաց դպրոցում: 1940-ին ընդունվել է Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Ս. Հակոբյանց Ժառանգավորաց վարժարան, որն ավարտելուց հետո, 1945-1946 ուսումնական տարում որպես ուսուցիչ ծառայել է Ամմանի Ռըսեյֆա գյուղի հայկական դպրոցում: Իսկ 1946-1947 ուսումնական տարում ծառայել է որպես ուսուցիչ Սիրիայի Ռաքքա քաղաքի հայկական դպրոցում:

1947թ. նոյեմբերին ներգաղթել է հայրենիք եւ հաստատվել Լենինական քաղաքում: Նույն տարում ընդունվել է Լենինականի Միքայել Նալբանդյանի անվան Մանկավարժական հաստատության նախապատրաստական դասարանը եւ ապա ուսումը շարունակել լեզվագիտական բաժանմունքում՝ ավարտելով ուսումը 1952թ.: Ուսումնառության հետ միասին աշխատել է Լենինականի Ձորի թաղի գրադարանում որպես գրադարանավար:

1952-1954 թթ. որպես ուսուցիչ պաշտոնավարել է Սպիտակի շրջանի Սպիտակավան քաղաքի թիվ 1 դպրոցում: 1954-1956 ուսումնական տարիներին աշխատել է Լենինականի երկաթագծի գիշերային եւ ցերեկային թիվ 39 դպրոցներում: 1956թ. օգոստոսի 5-ին Գերշ. Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի ձեռամբ ձեռնադրվել է քահանա Երեւանի Ս. Սարգիս Եկեղեցում եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կարգադրությամբ պաշտոնի կոչվել Սուրբ Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանում որպես հայոց լեզվի, գրականության եւ կրոնի դասախոս: Միաժամանակ 1961թ. որպես ծիսակատար քահանա ծառայել է Ս. Էջմիածնի Մայր տաճարում: Դասախոսական աշխատանքներին զուգընթաց 1956-1966 թթ. եղել է ավագ վերակացու: Տարբեր տարիներին կատարել է տեսչի պաշտոնակատարի, ինչպես նաեւ օգնականի պարտականությունները: Իսկ 1971թ. մինչեւ 1979թ. եղել է Սուրբ Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանի տեսուչ:

Երկար տարիներ (1970-1980) եղել է Ամենայն Հայոց Հայրապետության «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմնի անդամ: Տարիներ շարունակ վարել է Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե եւ Ս. Շողակաթ վանքերի վանահայրության պաշտոնը (1961-1979): Ծառայության ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետի կողմից պարգեւատրվել է. 1966թ. մայիսի 4-ին՝ Հայրապետական Կոնդակով քահանայական լանջախաչ, 1970թ. սեպտեմբերի 4-ին՝ Հայրապետական Կոնդակով ծաղկյա փիլոն կրելու իրավունքով, 1973թ. դեկտեմբերի 3-ին՝ Հայրապետական Կոնդակով «Վաստակավոր դաստիարակ» կոչումով եւ վարդապետական լանջախաչ կրելու իրավունքով:

1953թ. ամուսնացել է օրիորդ Սիրունի հետ եւ ունեցել չորս զավակ: 1980թ. սեպտեմբերի 1-ից ծառայել է Երեւանի Սուրբ Սարգիս Եկեղեցում, որպես ծիսակատար քահանա: 1994թ. հունվարի մեկից մինչեւ հունիսի 30-ը հատուկ առաքելությամբ մեկնել է ծառայելու Հունաստանի Կրետե կղզու Իրաքլիոն քաղաքի Ս. Հովհաննես Եկեղեցում, ապա վերադարձել է Երեւանի իր պաշտոնատեղի՝ Ս. Սարգիս Եկեղեցի: 1983թ. ի վեր եղել է Արարատյան Հայրապետական թեմի թեմական խորհրդի անդամ:

1997թ. հունիսի 24-ին ընտանյոք մեկնել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ եւ մշտական բնակություն հաստատել Լոս Անջելեսի շրջանում: